

**Հարցաշար**  
**հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի**  
**11-րդ դասարան – 180 րոպե**

Արևառ դեմքով ալեհեր մի իմաստուն իր աշակերտի հետ քայլում էր կանաչազարդ ծառաստանով: Օդը լցված էր **տարաթույր** ծաղիկների **հոգեպարար** բույրերով: Ծերունին **խոնջացած** նստեց **գողտրիկ** լճակի ափին, հմայված նայեց ալեվետող կոհակներին՝ վայելելով սյուքից խայտացող ջրերի խաղը: Երբ լիճը խաղաղվեց, նրա ողորկ հայելին արտացոլեց ողջ շրջակայքն աներևակայելի ճշգրտությամբ: Հավերժող բնության **անքակտելի** կատարելությունը, նրա **անքույթ** ու հավասարակշռված հանդարտությունն ակամա խորհելու տեղիք տվեցին: Խոհուն հայացք չկտրելով լճից՝ ծերունին դիմեց աշակերտին.

- Երբևէ մտածե՞լ ես՝ երբ կհաստատվի լիակատար ներդաշնակություն մարդկանց հարաբերություններում:

Պատանին որսաց ուսուցչի **խորագին** հայացքն ու մի պահ **կարկամեց**. նրան ապշեցրին բնության և նրա արտացոլանքի նույնականությունը, անվրեպ ու անխաթար պատճենը լճի հարթ մակերեսին:

- Գուցե այն ժամանակ, երբ բոլոր մարդիկ միանման մտածեն, դառնան մեկմեկու արտացոլանքը, միմյանց ստվերը, - անվստահ բարբառեց տղան և անրջային աչքերը դեպի ուսուցիչը՝ հարցրեց, - մի՞ թե դա հնարավոր է:

- Բնավ, ո՛չ, - հնչեց ուսուցչի շեշտակի պատասխանը, - և լավ է, որ անհնարին է, այլապես ամենուր **կթևածեր** ոչ թե ներդաշնակությունը, .....

Կարճատև, սակայն խորհրդավոր լռությունն ընդհատելով՝ ծեր իմաստունը, **տամկացած** աչքերը վսեմ բարձունքներին, մրմնջաց.

- Ավա՛ դ, մարդկային հարաբերությունները կպսակվեն ներդաշնակությամբ միայն այն դեպքում, .....

1. Շարունակի՛ր անավարտ նախադասությունները: (4 միավոր)
2. Մեկնաբանի՛ր «*ներդաշնակություն մարդկային հարաբերություններում*» արտահայտությունը: (2 միավոր)
3. Գրի՛ր տեքստում ընդգծված բառերի բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Դուրս գրի՛ր փոխաբերական իմաստով գործածված առնվազն հինգ բառ: (1 միավոր)
5. Դուրս գրի՛ր շարահարությամբ կապակցված բարդ նախադասության մեկ օրինակ: (1 միավոր)
6. Գրի՛ր *լեզու* և աչք բառերով մեկական դարձված և բացատրի՛ր: (1 միավոր)
7. Բացատրի՛ր «*Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է*» թևավոր խոսքը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունը: (2 միավոր)
8. Դուրս գրի՛ր դերբայով և դերանունով արտահայտված որոշիչների երկուական օրինակ: (2 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն «Մտորումներ ճանապարհից առաջ» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)

# Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի առաջադրանքների պատասխաններ

## 11-րդ դասարան

1. ... մարդու լիակատար անդեմություն, նրա ներքին եսի, անհատականության կորուստ:
2. ... երբ յուրաքանչյուր ոք փորձի հասկանալ դիմացինին, կարծիք արտահայտելիս լսի ընդունի մյուսի ճշմարիտ խոսքը, լինի մեծահոգի, ներողամիտ, անհրաժեշտության դեպքում օգնության ձեռք մեկնի և այլն և այլն:
3. *գողտրիկ* – փոքրիկ ու գեղեցիկ, հաճելի, ակնահաճո  
*խոնջանալ* – հոգնել, հոգնած լինել  
*տարաթույր* - տարագույն, երփներանգ, երփնաթույր, գույնզգույն, երփնավառ, վառվռուն  
*հոգեպարար*- հոգին պարարող՝ զվարթացնող, հոգեկան մեծ բավականություն պարգևող, հոգեթով, հոգեհմա  
*անքակտելի* – անխզելի, չխզվող, անանջատ, անբաժան, փխբ. մնայուն, հաստատուն,  
*անքույթ* – 1.անվրդով, անխոռով, խաղաղ, 2.ապահով, անվտանգ  
*տամկանալ* – խոնավանալ, թացանալ, թրջվել, արցունքոտվել  
*խորագնին* – խորապես գննող՝ վերլուծող, խորաթափանց, խոր կերպով ընկալող,  
*կարկամել* – համբանալ, պապանձվել, անշարժանալ, քարանալ  
*թևածել* – թռչել, ճախրել, սավառնել, սլանալ, տարածվել, սփռվել
4. անքակտելի, անքույթ, թևածել, անբարբառ, պսակվել, անրջային
7. *Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է* – աշխարհում ինչ-որ բան այն չէ, սպասվածի՝ ակնկալվածի պես չի ընթանում. ծագում է Վ. Մարոյանի «Իմ սիրտը լեռներում է» թատերգության մեջ հնչած «*ինչ-որ տեղ մի բան սխալ է*» նախադասությունից:

## Գնահատման չափանիշներ

### 11-րդ դասարան

1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 2 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 2 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0, 5 միավոր:  
(Եթե սխալ է բացատրված՝ 0,1 միավոր):
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: